

ընդ երկար տարիներ՝ այս բաղմադարձարեան սրբավայրը լինէր տեղի ջերմեռանդն ազօթից ՚ի պատիւ և ՚ի փառս միոյն Աստուծոյ, ընդ հովանաւորութեամբ Երկնից թագուհոյն Պաշտպան — Տիրամօր Մարիամու կուսին:

Պարտք կը համարիմ ասաւ մեծաւ չնորհակալութեամբ յիշել զանուն մեծարգոյ Նիկոլայ Մուրզպաքչի (Հանդուցելց 16 հոկտ. 1883) գոխսանխագահի Օտեսասայի Կայսերական հնախոյզ ընկերութեան. զի նորա առաջարկութեամբ ձեռք զարնուած է բարի գործիս. գտնուեցան և ինքնայրդորդոր նուիրատուք, որովք գլխաւորեցաւ գործս:

Յօժարակամ՝ նուիրատուաց մէջ առաջին տեղին գրաւած է իրուամբ բարձրապատիւ ուսուցիչ Պետրովուրդի գեղ-

\* Այս հատուածս թարգմանուած է ուսումնագրէն. որ պարկի մնով ապուած է ՚ի թէ՛ռոսկի (1885), և ինդրովք կը ան ստանալ ՚ի Սուտաղ, Ասուուածամօր տաճարին մօտ. ուսումնագրութեալուն պատճառը այն եղած է, որ-

արուեստից ակադեմիային Պ. Լեւոն Լակոռիոց. զի աւագ խորանին մեծագին պատկերը, որ կը ներկայացնէ զՄայրն Յաւագին՝ նորա ճարտար վրձնոյն արդինք է, ձրիաբար նուիրած տաճարիս, հանգերձ փառաւոր շրջանակով, որ մեծ քերգութիւն կու տայ տաճարիս, և է առարկայ լերմեռանդութեան համօրէն ուխտարաց : Սորամէ վերջը յիշատակութեան արքանաւոր է բարեպաշտիկ Հայկազն Տիկինն Աննա Զէսմէնովիչ (Զամուրճեան) իւր առատածեան տուրքերովի յաճախ ուխտազնացութեամբ, որոց հետ ՚ի սրտէ չնորհակալութիւն համօրէն ձեռնտուաց և զարդարողաց Սուրբ Տաճարիս \* :

Հ. Քերոբիք Վ. Քուււեսեան

պէս զի առհաստրակ ամէն ազգէ ուխտաւորաց հետաքրքրութիւնց գոհ լինէ, իմանալով այդ բազմագարեան Տաճարին և այժմ Պաշտպան՝ Աստուծամօր ուխտատեղւոյն ստուգավէպ և մանրամասն պատմութիւնը:

## Դ Ր Ո Ւ Ա Գ.

Ի ՍՈՒՐԲԻՆ ԵՒ Ի ՍԻՐԵԼԻ ՆԵՐՄԱՍ Լ.Մ.ՄԲՐՈՒԽՆԱ.ՑԻ  
(ՏԵՇ Հատոր ԽԳ. Էջ 281):

Ա.Ա. Արդ՝ այս նիւթական ստացուածքին բազմազան նկարուց և տառից գեղեցկութենէն՝ վերանալով մտօք ՚ի գերանիթին, այսինքն ՚ի հանճար և ՚ի հոգի ստացողին՝ պանչացած կը հիմանակը մեր եկեղեցւոյ, գպրութեան և բովանդակ յիշատակաց յաստուածուս պարգևեալ գանձին՝ Ներմասի վրայ, որ յատկապէս ԼԱԾԲՐՈՒԽՆԱ.ՑԻ կը կոչուի, ինչպէս իր անուանակից հաւեղբայրն՝ ԿԱԾԵՑԻ. վեհագոյն զոյտ մը այն երկու անմատոյց ամրոցաց մէջ բնակող ամէն անձերէն. որը թէպէտ և բոլորովին քանդին և աւերին իսկ, այս զոյգ ան-

մահից յիշատակաւ անմուաց պիտի մընան իրենց անուանկն անդամ՝ պատմութեան էջերուն մէջ : Յետ Գրիգորիեանց և Սահակեանց կայսեցին կաթողիկոսական գահովն կը հաւասարի իրենց, իսկ Լամբրունացին իր եպիսկոպոսութեամբըն քան զամէնը կը գերզանցէ, դէթ իիլիկիոց հարստութեան եպիսկոպոսաց մէջ. և իրմէ եսքը՝ չկայ հաւասար և կամ իրեն մերձաւոր ոք. գուցէ և բռվանդակ Հայաստանեաց մէջ իսկ՝ ոչ ոք հաւասարի Ներսիսի՝ պարակցութեամբ բազմապիսի չնորհափայլութեանց և արդեանց այնքան կարճաւուն կենաց սահ-

1 Իր ընտանեգոյն և խորագոյն ծանօթ ձեռնասուն խաշտառը սպասաւորը կը համարէամի երդնուուլ յԱստուած, թէ անկէց կերը՝ ու ալ-

դայ՝ չի կրնար Ներուի հաւասարիլ. և մինչեւ ցարք՝ արդարանոյց ըսածն. « Աւ Ասոււած. . . Որ ո՞ւ լինէ՝ զերթ զինք չէին ։ »

մանի՝ այսինքն քառասուն և վեց տարուան ընթացից մէջ, ազնուական գարմով, վեմ բարուք, մեծ և կանխահաս հանճարով, եռահնդուն հոգւոյ և սրտի իմաստովթեամբ և տեսութեամբ, աստուածաբանական և հոգեկեցոյց գիտութեամբ, այլ և այլ լեզուաց և ուսմանց հմտոթեամբ, համողիչ և քաջ ճարտասանութեամբ, փափուկ իմաստ, ներով թէ յերգս և թէ ՚ի շարականս, և գերագոյն յիսուսաբուղին իդեերով և փափագներով՝ ՚ի Մեկնոթեան լաղմուաց և Պատարագի, ուսկից աւելի ազնուածոյն և աստուածայնագոյն իմաստը շկան թերևս մեր լեզուին մէջ: — Ասոնց և այլ բազմազան բարեմանանութեանց համար շատ պատշաճ էր որ գեռ կենդանութեան ատեն իսկ ինչպէս Յովհան Անտիռքացի Ռսկիրերան մակդիրն և կայսեցին՝ Շնորհալի, Լամբրունացիս ալ կրէր Սիրելի կոչումը և մակդիրը. զոր չեմ գիտե՞ր՝ թէ որ աստուածագոյինկ և կենակից անձն պատշաճեցոյց և արտասանեց առաջին անգամ: այլ ով ալ լինի՝ կը փափագիմ որ չմայ անվարձ յԱստուծոյ և յազգէս. այս անծանօթ անձին հետ չմայ անվարձ նաև կրկնակի գովութեանց արժանաւոր Յամուէլ Յկեռացի վարդապետն, Լամբրունացոյն աշակերտն, որ 1190ին ընդօրինակելով Յաղմանամեկնիշը բռուն, յիս կագիր օրինակէ հեղինակին, հոգելին սրատեսութեամբ կը ծանուցանէ թէ Ներսէս է Կ պիտի լինի այր գերազանց, և գրոց վերջնէկը համաստէնորա վարքը՝ թէ և գեռ կենդանի էր. որպէս « զի մի մնասցէ յառաջնել ժամանակին՝ » տարակյս սորին քնննողի, ովն և կամ ուսան և զիարդն՝ « ինչպէս կ'անգիւանամբ Մովսիսի Խորենացւոյ, Դաւթի և Նարեկացւոյն. « յաղագս այսոր՝ » զսորայս մինչև ցայս՝ որ է կենաց իւր ժամանակ երեսուն և ութ ամ, » ցացաք համառօտ. և մաղթեամբ Քրիս-

» таսиի<sup>1</sup> тиаլ զսյն մեղ և երկարու-  
» թեամբա ամաց՝ ի դլուխ՝ բարի հովուու-  
» թեամբ և հանճարեղ պայցելութեամբ,  
» խնամիչ սուրբ ուխտիս ( Սկնուայ ) և  
» առաջնորդ ժողովշյու ծեւ . . . եթէ այլ  
» ինչ՝ ի շնորհացն Աստուծոյ պտղա-  
» բերէ ծառս մեր՝ տնկեալ՝ ի գնացս  
» ջուրց սուրբ գրոց, մանկագունից ա-  
» շակերտաց սորին՝ տացէ Աստուծուած զո-  
» բութին՝ գրչաւ՝ ի տառ գրոց ժողովել,  
» և զբնթացս յառաջատութեան վարուց  
» սորին՝ զինի եկելոց պատմել ։ —  
» Չառ փափառելի էր և մեղ կենսագրո-  
» ղին բաղձանաց կատարումը . այլ յաշս  
» կենսատուին՝ այն սակաւ ընթացքին  
» մէջ՝ լեցուեր էր Ներսիսի կենաց չափը.  
» վասն զի այն թուականէն ութ տարի  
» ետքը հասակին միջօրէին մէջ կատարե-  
» ցաւ. և այս սակաւամեայ ընթացքին  
» մէջ այնչափ և այնպէս գործեց և պան-  
» ծալի յիշատակներ թողուց, որչափ որ  
» սակաւք դործեցին՝ երկարագոյն կե-  
» նքք : — Այ միայն յամուէլ, այլ և շա-  
» տերն ճանշան՝ ի մանկութենէ իսկ իր  
» գերաստիճան շնորհքները, և « ի մատի  
» եղեալ բազմաց, Զինչ կամի լինել  
» մանուկս այս, ատէնն », ըստ Գրիգո-  
» րի Սկնուացւոյ՝ որ և էր այր խորատես  
» կենակից Ներսիսի. որ Սրբոյն մահուը-  
» նէն եօթն տարի վերջը, իր Ներբողեանն  
» զրելով կը վկայէր՝ թէ « ի մաներմաց  
» և « ի շերամգունից նախ քան զմեղ՝ առ-  
» այս ձեռնարկեալ էր ». և մեր վե-  
» հազուններէն՝ շենք դոներ մէկն՝ որ  
» Ներսիսի պէս յինքն ձգած լինի թէ « ի  
» կեանս և թէ « ի մահու՝ ոչ միայն այլոց  
» այն ձեռնարկեալ էր ». և մեր վե-  
» հազուններէն՝ շենք դոներ մէկն՝ որ  
» Ներսիսի պէս յինքն ձգած լինի թէ « ի  
» կեանս իւնքն իսկ չի տատամիթ առ լիսն  
» արքայ զրած ջատագովութեան մէջ խոս-  
» առվանիլ, թէ « Բարեհոչակիմ՝ ի լա-  
» տինացւոց եկելոցին և « ի Հելլենա-  
» ցւոց և Ասոււց, և կամ՝ ի Հայա-  
» տանս » :

¶ Գրեթե ներսիսի վրայ խորհրդածած օրեն՝ Կաղաքացի Խաչակրաց անցից հմտւած առաջնագիր մը այս խափերս կը գրէր Ներսիսի վրայ. Ce Prélat est une des grandes figures du

si non la plus considérable, de l'histoire religieuse des principautés latines d'Orient, par le rôle qu'il remplit et se faisant, parmi les Arméniens, le propagateur des doctrines,

Ետակիրաւունք ունէին ներսփսի գվանչ չայցողք և սփրարկութ. վասն զի ով արդեգը սորա նման՝ տասն ու վեց տարեկան արժանաւորապէս քահանայ օծուեցաւ, և նոյն տարիիքին՝ սկսաւ առաջն անդամ սուրբ Գրոց մեկնութիւն զրել, որ և իւր երկասիրութեանց մեծագոյն մասն է: — Ո՞ւր քսան և երկ տարեկան դրուեցաւ հայր և տեսուչ, այսինքըն արքեպիսկոպոս Տարսոսի մեծ նահանգին՝ որ և նոյն տարուան (1175) յիշատակազրոց մէջ կը կոչուի Տիեզերական Վարդապէտ։ և յաշորդին (1176) մէջ՝ ՚ի լոյս կ'ամէ իւր անզուգական հոգուականը, այսինքն Պատուարագաւմենիիլը, որ ոչ միայն իր գրաւոր գործոց զրուխ և նախազաս է, այլ թերեսառ Հասարակ մեր հայերէն գպրութեան նոյն սեռի գրուածոց մէջ։ ուսկիցու շատ հեռի կը գտնուի ըստ այլ տեսութեան առատարան և ներանձնական Սուպմասամեկնիլը, զրեալ իր կենաց 26—8 տարիներուն մէջ (1178—1180). գործ կատարելագոյն հասակի, մեծ փորձոյ և հոգեկորութեան։ զոր այլազդ չէր կրնար ըմբռնել իր ծերունի վանականը Սամուէլ, բայց եթէ վստահանալի յետ Ասուուծոյ՝ « յանհաս » գիտութիւնն ի յիմաստութիւնն իւր։ — Ո՞ւ իրեն պէս (նոյն տարիներուն մէջ) կրցաւ հիւսել և արտասանել

institutions, coutumes et idées importées en Syrie par les Francs, en même temps qu'il travaillait, de tout son pouvoir, à amener l'union des diverses Églises d'Orient. Devenu, à vingt-trois ans, archevêque de Tarse, sa charité et sa tolérance en firent le médiateur entre les diverses Églises Orientales : Grecs, Latins, Syriens écoutèrent sa parole avec avidité, et tous lui témoignèrent, non moins que ses compatriotes, la plus vive admiration, ainsi qu'un profond respect ; et, par allusion au siège qu'il occupait, l'avaient surnommé le *Nouveau Saint Paul*. Une Lettre adressée par lui au roi Léon II nous est parvenue ; c'est un des documents les plus curieux et les plus propres à bien faire juger la situation religieuse des Arméniens en face des Francs, en même temps que la rénovation religieuse, sociale et politique qui s'opérait, parmi eux, sous l'influence de ces derniers. —

Փրկչին Համբարձման և Հողւոյն Ալբրեց Գալստեան հրաշալի ճառերը. և Հոռմկայի Հայաստանեայց եկեղեցւոյ Հարց համագումար ժողովքին (1179) մէջ հոչակապանծ Ալենեաբանութիւնը. որի են այլ հրաշակերտ իր գրաւոր գործոց, և անսուտ փաստուոյ միայն քաջարուեստ հռետորութեան, այլ և անարուեստ մանաւանդ թէ թերարուեստ աստուածային չնորհաց, որով լցեալ ժողովքին Հարց երիտասարդագոյնը լինելով՝ ծերունեաց և հնագունից լեզու և առաջնորդ էր, ինչպէս նաև վերջը այլ շատ գեսքերու մէջ։ — Միտք որքան քննենն այնքան ալկ'ապշին նորագործոց բազմութեան վրայ. որոց կենդանի վը կան յիսնամիւն մեծ և փոքր գրութիւնքն. յորոց ոմանք գրեալ հեղինակութէնքը, իսկ այլք թարգմանութեամբ՝ ՚ի յոյն, լատին և յասորի լցվուաց. թող սրբազն գրոց ընդօրինակութիւնքը, կամ՝ գրոց լուսանցից մէջ գտնուած ծանօթութիւնքը և լուծմունքը, յորոց զրման մենք ևս տեսել ենք. լուսանցից մէջ գտնուածներէն զատ նաև իր ձեռքով գրած պատճէնը<sup>4</sup>։

Նորհալոյն կենաց արեգակն խոնարհելն վերջը՝ որ էր ԺԲ զարու առաջին զրիշը՝ ԺԲ կը կը պայծառանար մեր Լամբրունացոյս, յամ 1195: — Պարագանեան կրելու կը կը կը պայծառանար մը Տառ Ալեւուի, և ուրիշ գրեք մ'ալ անշուշն իր ձեռագիրն ի արիզոն մեծ գրատան մէջ կը պահուի յունարէն նոր Կոտակարան, մը ուր գիմնացի երեսն՝ Ներսէս հայերէնը գրեք է, որոց կը գտնուի այս յիշատակարան։ « Ներսէս ուռուուտ եպիսկոպոս Տարսոնի, սիրով վասական յի սուրբ մատեան, զոր ծերացեալ ո գոյն շեղնացւոյդ, և նորուեցից ըստ Հայու ուղարկեցի աղաւելից լինիմ՝ ի վայելուացդ արքանեան։ Ալես գրութեանց հնարյան կիւր զի գրեքն է՝ որ լուսանցից մէջ ծանօթութեաններ ունի, գրուեր է յամին, 1175, յանորդ (աես յէ 90) Երեսին մէջ ներկայացուած օրինական և ձեռվ։

E. REY, Les Colonies Franques en Syrie. (1883), page 85.

<sup>4</sup> Այս տեսակներու թուին մէջ էն՝ Ա. Եփրեմ Մէտրոպոլիտուն համարականց, ամրոց ձեռագիր Լամբրունացոյս, յամ 1195: — Պարագանեան կրելու կը կը կը պայծառանար մը Տառ Ալեւուի, և ուրիշ գրեք մը կը գտնուի այս յիշատակարան։ « Ներսէս ուռուուտ եպիսկոպոս Տարսոնի, սիրով վասական յի սուրբ մատեան, զոր ծերացեալ ո գոյն շեղնացւոյդ, և նորուեցից ըստ Հայու ուղարկեցի աղաւելից լինիմ՝ ի վայելուացդ արքանեան։ Ալես գրութեանց հնարյան կիւր զի գրեքն է՝ որ լուսանցից մէջ ծանօթութեաններ ունի, գրուեր է յամին, 1175, յանորդ (աես յէ 90) Երեսին մէջ ներկայացուած օրինական և ձեռվ։

տորութեան գերազանց, ինչպէս նաև աստուածաբանական տեսութեամբ, չի զուական հմտութեամբ և այլ շատքա-ը բնմասնութեամբ, որք եթէ 'ի մի գու-մարենք՝ կարծեմ թէ կը գերազանցէ քան զամէն ծանօթ Հայ երևելի անձին-քըն. ընդ գրաւորին նկատելով զնա և 'ի գործնականն, կը գտնենք զի՞նքն ա-մենահաս ամենուրեք, 'ի շնո՞ւ և յանա-պատս, 'ի վանս և 'ի մայրագաղուս. վակերէ և վարժարաններէ, յեկեղե-ցեաց և յարքունեաց միապէս ընտրեալ և կոչեցեալ յայլ և այլ տեսլութիւնս, 'ի թագաւորէն և 'ի կաթողիկոսաց Գրի-գորեանց. մերթ կը նկատենք զնա առ ինքնակալն Ալամանաց, և առ արրաջ աղունս և առ եպիսկոպոսունս Արե-մուեայց՝ որք եկեր էին յազատութիւն երուսաղեմի. մերթ 'ի գուռն արևելյան կայսեր՝ 'ի թիւզանդիոն, և մերթ յԱն-տիրք առ Բրինձն Փառնկաց. և իւրա-քանչիւր ազգին իր Եղուով խօսելով.


Ճապահամեռաւուրբութեան, ԱՄԷ:  
Ի թու որդ առարտեցաւ հիմնաւուրբութեան  
ըաւրամանց զորիմներական տրուաց նամարտաւունա  
սիրէ 'եկարժումէն նաստիցուով ընթեցալութբազմ  
ըանարդոց և զարքոյն կուրզի քննութեան սուզափառ-  
հաւասույն բարերարութամանակի եկեալլեւ այրենքաշն  
արհես սկիզբնետուառելումին բանուարաշուանակայի  
նոյնարմերյուղնեփա 'և ծեռաւթիւնուզաւրատեսա-է  
գնուն և մը ճուտեալ սորինակէ : Ըստուց-  
դատանես և զաւագուարուաւրենուելուցուց

և երբեմն կ'երթայ 'ի Հռոմեայ ( 1189 ), երբեմն յերուսալիմ՝ կը ճանապար-հործէ ( 1179 ), թերևս բաց յուխտէ՝ կարեւոր գործի համար. թող իր ունեցած պարապմունքը Հայոց, Յունաց, Աս-րոց և Փռանկաց վանքերուն մէջ, որք կանի իշխանութեան տակն էին, Սև յե-րին, Անտիոքայ սահմանին և Հայոց ծո-վածոցի վանքերն. յորոց 'և որպէս գոր-» ծասէր մեղու, ( կ'ըսէ յիշատակագիր

» մի ), 'ի բազում ծաղկանց զրիւրապա-» տիկ և զանազան ժողովեաց զբարեաց » նախանձ, յամենայն նախնեաց սըր-» բոցն գերազարդից . . . իբրու երկրորդ » սաքրի 'ի յետին ժամանակս յազգիս » մերոյ » : — Ո՞ւր թողունք Ակեռայ ուխ-տին, Անապատին և վանաց վիրատես-չութիւնը, զոր հիմներ էին իր նախնի-քըն, և հայրն և եղբայրն ընդարձակեր վայելլացուցեր և իրեն յանձներ էին. և

՚ի վեր քան զամենայն՝ ուր թողունք իրեն  
յանձնուած Պօղոսի հայրենից մեծ ա-  
թոռոյն կառավարութիւնը, որոյ ամէն  
տեսողներն իր զկայեին՝ թէ ժառանդեր  
է նաև հոգեար նախանձը. և Սկառայ  
բարձունքներէն՝ ինչպէս սուրբ Սինայի  
սենեկէն, և օր ըստ օրէ իջեալ՝ ի ժողով  
» քաղաքին Տարսոնի, միսիթարէր զնո-

» սին վարդապետական բանիւ, և հան-  
» գուցանէր յինքն զամենայն տեսողա-  
» և զսողս. ոչ միայն զոր ՚ի Հայոց ժո-  
» ղովս, այլ և Ցուանդաց ազգ և Յու-  
» նաց. իւրաքանչիւր ազգացն կարգաց  
» և կրոնից տեղեակ գոյով, և յընտրու-  
» թիւն՝ հաւանեցուանող կամ հաւա-  
» նեալ։ Վասն զի ինչպէս և ինքն իր զկա-



յէր և կը գրէր՝ ընտրեալն այն և ընտրող,  
կը բազար անխտիր ամէն ազգ և լեզու  
՚ի մի ձուլել սիրով և հաւատով՝ ի Քրիս-  
տոս, և կ'ըսէր. « Է ինձ Հայն որպէս  
» զլատինացին, և Լատինացին որպէս  
» զէլլենացին, և Հելլենացին որպէս  
» զիզիստացին, և Եգիպտացին որպէս  
» զԱսորին » <sup>2</sup>։  
իւր այս տեսակ առանձինն իմաստ

տից բուն իսկագիրն ունինք մեր ձեռքն  
դրոշմեալ կակուղ թղթի վրայ, յամին  
1195, Եփրեմի աւետարանաց մեկնու-  
թեան յիշատակարանին մէջ, ուր դբոշ-  
մեր է նաև իր վաւերական կնիքն զոր  
կրնանք կոչել վայելագոյն դրոշմ սրտին  
հեղութեան գանձն Աստուծոյ. ինչ-  
պէս կը տեսնուի հոս ներկայացեալ  
պատճենին մէջ։

1 Գրիգոր Սկնուցի, Ներբողին մէջ.

2 Թուղթ առ Լուն արքայ։

Արդնկատողական աշջը նայելով Ներ-  
սիսի մտաց, ձեռին և լեզուին՝ ըստ իր  
բացարրութեան՝ այնչափ բազմապա-  
տիկ և բեղմաւոր արդասեաց վրայ,  
չեմկրնար չհաւանի՛ թէ հեղեալ է ինա  
չոգւոյն Սրբոյ առանձին ներդորդական  
չնորհքն. որոյ փաստ դարձեալ իրմէ կառ-  
նում իրնախընծայ և նախընտիր երկա-  
սիրութեան ոյսինքն Պատարագամեկնը-  
չին վրայ ըստածն, որ թէ և իր ձեռաց և մը-  
տաց սպասաւորութեամբ, այլ և ասացաւ  
» 'ի Հոգւոյն Սրբոյ... 'ի ժամանակ կենաց  
» մերոց մինչ էի քսանելորս ամաց, և  
» կայի 'ի լուսութեան և 'ի միայնութեան  
» 'ի մէջ լիրանցն Տաւրոսի » : Յիրաւի  
դաղամբ հաճոյական ցօղման չնորհաց  
Հոգւոյն Աստուծոյ. աղօթանուէր լուս-  
թիւնք և միայնութիւնք. յորս յիսու-  
սամերձ Յովիշաննիսեանց նման՝ կը տա-  
ճարանար և առավինի կը լինէր՝ հո-  
գւոյ և մարմնոյ բոլոր շարժմամբ, անոնց  
նմաննուիրեալ Յիսուսի գողցես և ինքն  
'ի մայրենի արգանդէն : Վասն զի դեռ-  
յաշխարհ չեկած՝ ծնողքն բարեպշտոնն  
Օջին և չնորհագեղն Շահանդուխա՞լիրն-  
գրեր էին զինքն ուխտիւք և նուիրեր Աս-  
տուծոյ . և եթէ յետոյ՝ առ վայր մը գո-  
զանոլ ուղեցին յԱստուծոյ՝ հիանալոյի  
մովսիսանման երեսաց կոյտառութեան  
վրայ, որտէս զի աշխարհի փառաց մէջ  
փայեցընեն, յանկարծ հիւանդութիւն  
մը գալով, և մանկական երեսաց վրայ  
անհրաժեշտ մահը տեսնելով՝ ծնողաց  
միտքն սթափեցաւ. բարեպաշտոն մոյքն  
առաւել մահալլուկ քան զմանկիկն՝ իս-  
կոյն կընթանաց յոտս Տիրուէւոյն Ոյկ-  
ուոյ վանքը, և մերսաին անդրժեխ ուխ-  
տիւք յետս կը գարձընէ մանկան կի-  
սամեռ ողին, և կ'ասպրեցընէ մանկան  
ապաժայ համբաւոյն՝ և արժանեաց ան-  
դիւտ կորուսար. անկից վերջը՝ ընդ Աս-  
տուած և իւր մայրենի դրովին բաժա-

նելով զմանուկն՝ կը կրթէր և կը մար-  
դէր զինքը՝ սրբակրօն անձանց ձեռքով,  
նախ աստուածային՝ և ապա մարդկային  
մտաց հրահանգաց մէջ . Աստուծոյ մա-  
որ լիուլի Աստուծոյ տալով, և մայրե-  
նի մասը՝ անթերի իրեն պահելով. այն-  
պէս՝ որ կը թողուր որ գեղերի յազօ-  
թանոյս, 'ի սրբարանն, 'ի վանս և յանա-  
պաս, այլ չէր թողուր՝ որ հեռաւոր  
օտարութեամբ բաժնուի իրմէ . թէ պէտ  
աղայն առաւել աստուածասէր քանձնո-  
ղասէր՝ շատ անդամ գաղտագոյի փախ-  
չել փորձեց՝ և իրթալ լերանց ծածուկ ա-  
պառածից մէջ վիրաւորեալ ոտքերով  
և պատառատուն զգեստներով՝ մինչև  
Սրբոյն Գրիգորի գաւառը, տեսնել նո-  
րա ճգնութեան տեղիներն, Դարանա-  
զեաց հոչակաւոր և բազմաթիւ վանո-  
րայից մէջ . այլ մայրն արթուն՝ ետեւէն  
խնդրակներ զրկեց, որ բանեցին զինքն  
և զարձուցին հայրենեաց և սիրոյ սեպ-  
հական սահմանին մէջ . և այս ոչ թէ  
միայն մանկութեան ժամանակ՝ այլ քա-  
հանայութեան և եղիսկակոպոսութեան  
ատեն ալ . շատ անգամ բռնի յանապատ  
կը քաշէր զնա երկնային սէրն, իսկ  
ընտանեաց գութն՝ կը ստիպէր զինքը՝ ի  
տուն և յիկեղեցին Տարսոնի : Նոյն իսկ  
իր կենաց վերջին տարիներուն մէջ, երբ  
արևելեան Հոյոց առաջնորդներէն ո-  
մանք կը կոսկածէին և կը նախանձէին  
իր վրայ՝ և ինքն կը փութար հեռանա-  
լու երթալու առ նոսա՝ խօսելու, վիճե-  
լու և հաւանեցընելու, կը վախէր՝ շըլլոյ  
թէ իր գթոստ ընտանիքն՝ արդեցք թնին  
իր ճանապարհորդութեան :

Այսուդէս ճշմարտիւ Ներսէս Սիրելի  
էր թէ Աստուծոյ և թէ մոտացի մարդ-  
կան . և որքան կ'առաւելուր 'ի նա իմա-  
նալի սէրը, այնքան զարմանալի և սի-  
րիի կը լինէր յաշո տեսողաց . թէ և ին-  
քըն կը փափագէր խափանել այս զար-

1 Մանուկն ալ ցըցուց Տիրամոր իր եւախառ  
գիտութիւնն՝ երբ մասւ եկեղեցական աստիճանի  
մէջ, Վերաբոխման օրը ներբողով զլ . Կյան-  
ըստ իր ասից և իրը զանկեալ 'ի նմանէ որթ՝ 'ի  
» մէջ բիւրաւոր ստեղանց յաստուածատունն  
» սուրբ այս տաճարի ». գարձեալ, « Հանդոյն

» Սամուելի եմ ես ընծայած Մօրս Աստուծոյ,  
» 'ի ծնողաց նուրիսած՝ կրկնոցաւ՝ 'ի պաշտօն տա-  
ճարերի մեռն՝ և անամբարուր շնորհամբ կը  
հրաւերէր զժողովուրբ լսել զնորհքածու-  
թիւն յաւուր մեծի, սիրէ 'ի սեփական և ընտո-  
» ծին ծառայէ սուրբ և ամենօրդնեալ կուսի :

մացումը՝ այլ չեր կրնար . սրով նետե  
ինչպէս անհնարին է ցորեկուան արե.  
դական լցոր խասփաննել նոյնպէս անկա.  
րելի է ծածկել յաստուածուստ արտա.  
փայլեալ սէրն և նորհքը . — Մեթէ  
չե՞ր կրնար առանձին նորհք մ'ալ կո.  
չել լամբրունացւոյ՝ ննորդաշոյն յա.  
տուկ գիրկը զգուիլն . երբ սա յետ  
հաշտեցնելու անոր հայրը զօշին ընդ.  
քաջին թորոսս, եկաւ ՚ի լամբրուն .  
կամ երբ ընդունեցաւ զինքն արթիներէ  
վերջը՝ ՚ի Հռոմկլայ, դարձեալ ՚ի մայրե.  
նի գրիաց, և քահանայտկան նորհին  
հետ թափեց ՚ի նա և իւր հոգւոյն օծու.  
թիւն . նաև յարազանն էնքեալ Սմբատ  
անունը՝ փոխելով՝ ՚ի Ներսէս : Այս ի.  
մաստէս հեռի չէ և այն հին խորատես  
գրիցը՝ որ լուսաւորչէն, Ներսէս և Սա.  
հակէ վերջը՝ և կլայիցւոյն վրայ ըսելով՝  
թէ « յետ յոլովից՝ ՚ի վալսնան ժամա .  
» նակիս և ՚ի վերջին դարու, յանբարի  
» և ՚ի նուազեալ ժամանակս, իրը ՚ի  
» գրուն ձմերայնոյ՝ ՚ի լմնացեալ ճուռ  
» կամ ողկոյզ ինչ՝ զարմանալի փայ.  
» լեաց և երեցաւ ՚ի զարմէ և ՚ի ցեղէ  
» ընտրութեան մեծի լուսաւորչին, հա.  
» մեմատ առաջնոյն՝ երկրորդ գերամա.  
» քուրն Ներսէս, որ գհայրենին յաջոր.  
» գեաց գահ և ամոռ հոյրապետու.  
» թեան ՚ի կլայն Հռոմական, և զամե.  
» նայն նորոգեացցատնախնի հարցն բա.  
» րեզարդութեան « . . . կը յաւելու և կ'ը.  
» սէ . Շրում, ՚ի նորին արեան մերձաւո.  
» րութենէ՝ մանաւանդ յաշակերտու.  
» թենէ, լուսափայլն բանիւ և մաքուրն  
» վարուք՝ յետ նորա ծագեաց և փայ.  
» լեաց նորին ձեռնասուն եղոր ծննդոյ  
» որդի՝ սուրբ և երչանիկի հայրն մեր  
» այս Ներսէս . որ լատ եռանդնոտ բրո.  
» բրման՝ ՚ի սրբագործ հարազատ սէրն,  
» ըստ Զերեգեայ Արդւոյ, զլիթիւին

1 ՚ ՚ Գիր քոպատուականութեանդ՝ միանդամ  
» և երկիցս, Հայր սուրբ, եհաս առ ին, փութա.  
» ցուցանող առ ՚ի խնդիր քննութեան ասառաւ.  
» ծարան Առաքեցն Յովհաննու ազօթից յո, և  
» այն . . . . Որունային իւն Հմարատասէր, և  
» իմաստասէր, մինչ ոչ բայովի բաւականցեալ,  
» այլ և զեղ ձգեցր հաւանութեամբ ՚ի յան.  
» գիտութիւն, և հայր պատուական Ստեփանոս.

» նի յստակութիւն մակակոչութեան ո :  
— Այս խօսքերէն պէտք ենք իմաստա.  
սիրել որ ըստ կանուխ ըզէից ծնողացն՝  
պարզեցաւ Ներսիսի յաստուածուստ,  
ոչ սովորական՝ այլ սովորնական հան.  
ճար և ընդունակութիւն . և կրնար իսկ  
վերջնոյս հետ, ինչպէս նաև անոր նման՝  
մեր Յովհան Յանեցւոյն հետ կոչել զին.  
քը՝ « մանուկ սուրբ և մատավորժ », որ  
եռ իրեն մատաղ հասակէն՝ « յօժա.  
» բութեամբ իմացաւ տեսանել յա.  
» առուած այինս և ՚ի գերարունս » . և ոչ  
միայն իսկոյն կ'ըմբռնէր և կ'ամբարէր  
իրեն արուած իմաստներն և ուսմոնէրն,  
այլ « ուր տեղեկանայր զիմաստուն հան.  
» մարեղ ուսուցչաց՝ ՚ի մերձակայս և  
» հեռաւորս, վաղվաղակի անդր հասա.  
» նէր, զօրէն անօսրամին և իմաստոն  
» թռչնոյ՝ ՚ի վերայ թռչելով մարգաց  
» հին և նոր կասակարանաց », և այն, ե.  
րանէն այն անձանց՝ որք արժանի եղան  
այնպիսի աշակերտի մը վարժապետ և  
դաստիարակ լինել . և այս անձինքն են  
շատ անդամ յիշուած Սամուկլ, և Յով.  
հանէնէն, որ պիտի յիշուի, և Ստեփիանոս  
Յակոբեցի վարդապետն, որոյ բաղձա.  
նաց համար գրեց Ներսէս՝ Յովհաննու  
ննջման Մեկնութիւնը ( կը ընդ եղար.  
սըն ), և իր կանխահաս մտաց առաջնն  
գործերէն մին պէտք է որ լինի . վասն  
զի ինքզինքը լուկ Ներսէս կը կոչէ, և գո.  
րովանգք և շատ պատուով՝ կը իսուի  
առ գաստիարակն, որ թուի թէ ժամա.  
նակին նշանաւոր վարդապետաց և վա.  
նահարց մին էր :

Այն տտեն ժի գարը ՚ի կէսն հասեր  
էր : Կիլիկիս՝ թորոսի և Լեռնի իշխանու.  
թեան աակին էր, երկիրն հանդարատեր և  
սահմաններն հաստատեր էրն . յանդոր.  
րութեան կը ծաղկէին մուաւոր և հոգե.  
ւոր հրահանգներն . այն ատեն՝ ըստ եր.

» զորոյ՝ ՚ի գլուխ ած նորհն Աստուծոյ՝ զիշն.  
» գրեիս, ՚ի ձեռն տառապեալ գործարանի, ՚ի  
» փառս իւր և ՚ի վայելս գումբ հաւատոց և  
» հմարիտ առ Աստուծածարանս սիրոյ . . . Փու.  
» թացեալ միայն հաւատագութեամբ որդիա.  
» կան հաստակութեամբ՝ պատճան նիւթել  
» իմաստնոյդ՝ առ ՚ի արքի իմաստութիւն բար.  
» ձրանալ » , և այն :

գողին՝ և զուարթացան ( և ) բյափ ե-  
» կեղեցւոյ, և գեղեցկացան Ընապատք  
» մաքուր կուսութեամբ ։ գրեթէ ա-  
մէն Պարոն՝ ամրոց և մենաստան մի կը  
կանգնէր. վանքերն ուսմանց և պայծա-  
ռութեան նկատմամբ՝ կը ջանային զմի-  
մեանս գերազանցել. և յառաջադէմ  
վանքերու մէջն էր նաև լամբրունեանն  
Սկեռա. որոյ պատուղներն յայտնի են,  
( յիշեալքն Սամուէլ և Գրիգոր. և Սըր-  
բոյս քեռորդին՝ Ներսէս, զոր պիտի յի-  
շենք, և յետոյ Գէորգ, Եսայիեայ մեկնի-  
չըն, և այլք ). յիրաւի մեր Ներսէսն ալ  
այս վանքերուն մէջ կրնար գտնել մտաց  
բաւական սնունդ, այլ ոչ յագեցուցիչ  
իր մտաց լսյութեան և բարձրութեան,  
զոր բովանդակ կենաց մէջ կը ցանկար  
լեցընել, ուստի ալ լինէր, թէ յազգայ-  
նոց և թէ յօտարաց. և առաջին ան-  
գամ ինքն բացաւ լատինական լեզուի  
ուսման ճանապարհը. արդէն՝ ի տղա-  
յութենէ՛ մօրը խնակով վարժած էր  
յոյն լեզուի մէջ. և երկու լեզուներէ  
ալ շատ բան թարգմանեց. և անտա-  
րակոյս՝ թարգմանածներէն շատ աւելի  
են կարդացածներն. շատ հաւանական  
է՝ որ երրոյական <sup>1</sup> և ասորի <sup>2</sup> լեզուաց  
ալ տեղինակ էր. և ահա ասոնք ալ Ներ-  
սիսի գիտութեան և գերազանցութեան  
ուրիշ ազրիւր մ'են .

Այլ ասոնցմէ վեր՝ Ներսիսի զարդաց-

1 ԲԲ Մարդարէից գրոց մէկնութեան մէջ՝  
ըստ կը տեսնուի թէ գրութեան առաջին առ-  
բներն ըրեր է՝ սակա ( գրեթէ ՅՈ անդամ )  
կը յիշէ նա երայիցի ընտրին զանազանու-  
թեալ ՚ի հայ թարգմանութենէս. և որովզ  
հետո կը տեսնուի թէ ՈՒ ուրիշ մեկնըէ չէ ա-  
ռած՝ մենաւանդ. որ Փոքր-մարգարից գրոց  
մէկնիքը շատ ասկաւաթե են, անտարակոյս  
կը թուի ինձ՝ որ մօր նախնաց թարգմանու-  
թիւնը բազգատեր է չներ բուն ժագարին:

2 Յընագրոց թարգմանութեան յիշատա-  
կարտին մէջ կը ծննդացանց որ 1193ին Գրի-  
գոր Տօնյ ֆնաւելով հայ լեզուով օրինաց գրոց  
և բանելով, և պատահեալ անդ ( ՚ի Հոռո-  
ւ կըս ) յԱսորոց Փէսդոս անուն կիրթ յի-  
մասունաւեան՝ քանանց, յայտեաց Տեառ-  
անը՝ զոր գոյր առ ինքն այս համաստ Քա-  
յաբական օրինագրութիւնն. և հրաման  
և տուել ինձ . . . . և ուստիշի ՚ի հայո . . . .  
» յետ որոյ ապա և ՚ի Հելլենացցց գրոց ա-

ման ներքսագոյն պատճառ և առիթ են  
առաքինաջան կրթանք, գերամաքուր  
վալք, աղօթասիրութիւն, ճնշում մար-  
մոյ յամենայն զիւրութեանց, մինչև ՚ի  
կարևոր կերակուրն և ՚ի քուն անգամ.  
յորս՝ առանց բնաւ առաւելաբանու-  
թեան՝ կրնանք ըսել էր անգուն և ան-  
տւաղ. և այսպէս կրկնապատկեր և  
երկարեր է իր կարճատն կենաց ժամա-  
նակը: վասն զի ըստ վկայութեան ա-  
կանատեսից, ծառայն՝ որ ամէն օր կը  
տանէր Ներսիսի կերակուրը, և կը գնէր  
զայն սենեկին պատուհանին մէջ՝ եր-  
կրորդ օրը ամբողջ կը գտնէր զայն և  
կամ շատ քիչ պակասած. վասն զի շատ  
անգամ քիչ մը բանջարով գոհ կը լի-  
նէր: Եւ ինչպէս որչունէր մեծահաց սե-  
ղան, չունէր նաև անկողին. և մինչ զի  
» ոչ երրեք մեկնեաց զոտս իւր յանկո-  
» զինս՝ ՚ի տուէ կամ՝ ՚ի զիշերի. այլ  
» զցերեկն պարապէր աղօթից, ըն-  
» թերցման սուրբ գրոց և վարդապե-  
» տութեան և ամենայն բարի գործոց,  
» և զցիշերն նստեալ գոլով յաթոռ  
» ինչ՝ անդ վճարէր լքնոյն պէտոն առ  
» սակաւ մի, և վազվազակի զարթու-  
» ցեալ՝ կանխէր յալզօթս . . . ընթեռ-  
» նոյր և ուսանէր միշտ. և գրէր ան-  
» հանգիստ զցայդ և զցերեկ » Յ՝ Եւ  
կրնանք ըսել՝ թէ այսպիսի բռնազրոս  
հնարինք խարեց զմահ. և գեթ տասը

» բարի թարգմանութիւն Մովսիսական օրի-  
» նացգ, և իշուի և Կոստանդնուպոլ օրինացց :  
և այլ, այս վերին խոպերը կրէին կը հա-  
ատան որ Թէոդոսին քով գտնուածը յաւառքին  
էքր, այլ սոսորեցէն, ինչպէս նաև միշև հիմա  
կը գտնուի, կրնանք կարծել՝ որ Սեւա լերին  
մակերը ուր կար նաև Ասորոց վահե, թա-  
առածած համականք սովորած լինի ներսէս սե-  
մական լեզուներն, և թերեւ Վ. Հոգւոյն յա-  
տուի շնորհուցուլ:

3 Նոյն հենասագիրն կ'ըսէ ուրիշ տեղ. և Յա-  
» մէնայն երեկոյի մինչև այրէին նեկան՝ գրէր.  
և առաք անց են յաթոռն իւր նստեալ սակա-  
թիւննէր, և իսկոյն յաթոռնեալ երեմայր յե-  
» կելեկէր, և առ սահմանեաց ՚ի ներս պաշտել  
» զամանայն ազթօն. և զառաջին պաշտօն՝ ՚ի  
» ձայն պաշտել տայր »: իր մեռնասուն իսա-  
չատուր սպասաւորն ալ կը յիշէ զնէրն ներ-  
սէմ սովոր իսնեցէն:

տարի գողնալով մահու ստուերէն՝ այս  
ինքն քնոյ թմրութենէ՝ գործածեց այն  
ժամանակը՝ խոկմանց, աստուածաշունչ  
գրոց իմաստից լուծմանց, յորոց մեղի  
ձանօթեն տասուերկու Մեկնուրիւնք՝  
որոց համար՝ շատ գեղեցիկ կը խորհրդա-  
ծէ իր ներբռոյին Գրիգոր, թէ « Զայ-  
» լովին զաւենեքումբրդ զանց արարից՝ ի  
» վերուստ առ ՚ի նա պարզեն չնորդի  
» այս միտյն բաւական ՚ի հիացումն ա-  
» ծել զլազսու . և « եթէ ու մեք ըլջա-  
» լի իցէ անհետազոտելի աստուածային  
» խորոյն լինել հասու, զնա ընթերց.  
» ցի՞ » :

Այս էր երանելոյն փափաքանաց և  
ջանից նպատակը, որ ոչ միայն ինքն  
հմտութելով, այլ և զուրիշներն ալ հըմ-  
տացընէ աստուածեղէն զրոյ և կար-  
գաց վրայ, մանաւանդ զբահնայս և  
զվանականս . այս նպատակաւ քահա-  
նայից համար զրեց Պատրիաքամեկ-  
նիլը, խորհրդանորդինք հաւատոյ և  
կարգաց նեկենցը՝ որ սովորաբար ա-  
ռաջին զրոյ հետ կը միացընեն, և Մաշ-  
տոցի <sup>2</sup> մէջ պակաս եղած Օրհնութեան  
կանոնները : Ի լստին լեզուէ թարգմա-  
նեց լստին եկեղեցւոյ կարգաց զիրքը և  
Հռովմայ <sup>3</sup> եկեղեցւոյն Դատաստան  
և վիճակագրութիւն կամ կարգ նեգե-  
ցուն պատրիաքական արքունց, գոր-  
գրեր էր Նիւս Դոքսապատիա կոչուածն  
ԺԱ գարուն վերջները, և ինքն 'ի հոյ  
թարգմանեց 1479ին : — Խոկ վանակա-  
նաց համար հաւաքել և պարզել տուաւ  
Վարք Հարանցը . թարգմանեց Ս . Գրի-

1. Մեկնութեանց մեջ առ մեզ ծանօթքն են  
Մեկնութիւնն գրոց Արարածոց, Սաղմանի,  
այսինքն Առակաց, ժողովրդի, հնատառութեան  
և Երբոց երգն, մին Մարգարէ իշխ, Դարձիլի  
և Սաղմանաց, Նոր կտակարանէն Մեկնու-  
թիւն Մատթէի քաղութածոյ, և Թղմոց Կո-  
թողիկէից, Տերունական առակաց, և սուրբ  
գրոց մերձաւոր՝ Յովհանոս ննջան մեկնութիւ-  
նը, ու իր հոգակն նաև իւնդ կըմարսն ա-  
ռանձինն Պատարագատեսկութիւնն մեջ ալ Տերո-  
ւական աղօթից և Հաւատաց հանգանակին Մեկ-  
նութիւնն գրեց:

2 Խաչպետ էն, Կանոն ջուր օրհնելը. Պըզ-  
ծեալ լրհնոր օրհնելը, և Ձեռնադրութեան կար-  
չաց ամբողջութիւն :

զոր Պապին Տրամախօսուրի հենքը, Ա. Բնենդիկտոսի կանոնները, և նոյն վա-  
նաց Սահմանադրութիւնը՝ զոր շարա-  
զբեր էր Վլրնջեր (Պետանիչէ) վարդա-  
պետն՝ նոյն կարգէն: Այսպէս մեծ խնամք  
և փոյթ ուներ վանականաց կենցաղավա-  
րութեան վրայ այս անձն՝ որ 'ի մանկու-  
թենէ կիրկիեան միայնութեանց մէջ կը  
մնչէր կիրդնոսի և ժեռակիրի կարկանդա-  
հոս վտակաց մօտ, արժանի լինելով  
ցանկալի և հազուաղիւտ բազդին այն  
զատուն մէջ. այսինքն՝ նուիրելու և ուխ-  
տելու Աստուծոյ իւր անձին նուիրո-  
ղը և ուխտողը, և ըստ մարմնոյ ծնողը՝  
հոգեւորապէս ծնանելու, և իւր Շահան-  
գուխտ մայրը Ցալիթա և Շուշան քեր-  
ցը հետ' ի կուսաստան մացընելու. գու-  
գելով այսու մերձաւորապէս անապա-  
տասէր տատրակները՝ աղաւնեաց հետ-  
որոց մրմունքն (սիրալիր ձայնն) մինչ-  
դեռ կենդանի էր՝ իւր սուրբ սեղանին  
առջև կը հնչէին, և յետ մահուն՝ հեծու-  
թիւնքն գերեզմանին վրայ: — Եւ գար-  
ձեալ րովանդակ եկեղեցւոյ և հոգեսէր  
անձանց համար՝ սուրբ դրոց և Ժամա-  
գրոց և ուրիշ եկեղեցական աղօթից  
վրայ այլ և այլ մեկնութիւններէ զատ,  
յօրինեց լուծմունք Սուրբ Հարց գժուա-  
րիմաց խօսքերուն, ինչպէս նաև Դիո-  
նիսիոսի և Նարեկացւյն և իմաստնոց  
ալ տարակուսական այլ և այլ աստուա-  
ծաբանական խնդիրներ, Ալրոց վարք և  
վկայաբանութիւնը. շարականները<sup>5</sup> և  
տաղերը լրացուց, և գրեց տօնական և  
խրատական <sup>6</sup> ձառներ և Գարողներ: —

3 Սայդ չեմ գիտերթէ ինչ և այս երկրորդ  
թարգմանութիւնն, թերեւս առաջինն կայսեր և  
Թագավորի օրհնուած արքայի բարեկը բանադակէ:

3 Այսուհետեւ ը ըստու, ուստի ա պատճեն  
զ բարողս է կեղեցւոյ և վլաջօթնին :  
3 Կանոն Յարութեան, Այսօք Յարեան . —  
Նոր կիւրակէին, Նորդեան Խաչ : — Թռանց Ա .

6. *Susobrakēz̄ kāmēz̄ kāmēkēz̄ kāmēkēz̄*

Ատկնասքանուրիթենը եկեղեցւոյ ամռուա-  
կալաց համար, Պատուանք թղթոց՝ Հա-  
յոց և Բունաց միաբանութեան համար .  
և այս խնդրոյս պատճառաւ ուրիշ ան-  
գամ, մահութենէն քիչ առաջ, 'ի Կ. Պօլիս  
ըրած նուրիակութիւնը, ուր այնքան  
ճարտարութեամբ և ուղիղ սրուի և մը-  
տօք, միանդամայն և ազգային ողլով՝  
Յունաց վարդապետաց ճաւեց և պա-  
տասխանեց, և տեղի տուաւ նոցա խըն-  
դրոյց արգարապէս ջատագովլիսվ հայ-  
քենին եկեղեցին և իբրև միակ միջնորդ  
միաբանութեան, 'ի Յունաց քանին մը  
պայման խնդրեց, և ափիրերան ըրաւ  
զաններ՝ որ չէին սպեր զիջանել և թո-  
ղուլքանի մը աւանդութիւններ, օտար  
ոչ միայն 'ի Հայոց, այլ և 'ի Հռովմայե-  
ցւոց. և գարձաւ թէպէտ առանց շահու՝  
որ իւր ձեռքը չէր, բայց արգարակորով  
տրամաբանութեան յաղթանակաւ, և  
նոյն իսկ անհաւաններէն՝ գովութիւն  
ընդունելով. և շատ տրումեցաւ նոցա  
հպարտ բարուց վրայ, ինչպէս կը նշա-  
նէ յիշատակարանի մը մէջ, ըսելով թէ  
ոչ միայն անծանօթ գտեր է զիրենք եր-  
կու ազգաց 'ի վաղուց հետէ հաւատոց  
խնդրոց վրայ ունեցած թղթակցու-  
թեան, այլ և « թանձրաբարբառք և  
հրէական կամօք ընդ նիւթ կապեալք,  
որք ոչ ախորժեն ծառայել Աստուծոյ՝  
նորոգութեամբ Հոգւոյն, այլ հնու-  
թեամբ գրոյն. և սարջացեալ 'ի հոգեսր  
կամն մեր՝ գարձաք յիմաստախոհ յու-  
սոյ սոցա՝ ամօթով » . Պէտք է համարինք  
թէ այս հոգեսր պիտոյից համար թարգ-  
մանեց լուսիսու և կըմէս դ քահանա-

ասկելուներէն զատ, ծանօթ են՝ ՚ի Ալբագիշան  
Ս. Կառնի, ՚ի Տորհուըրդս Անտառին և Տներին;  
1 Ժայռցն ըստման ատին, ըստ աւան-  
դէց մերիներէն մէկուն, և Եկին ունի իմաստա-  
սէր կրօնաւուն առ Ս. Նիկոլս, և ասէ Թէ  
Արաւանձին առեր գովառթիւն՝ ի մարտապալատացն  
և ՚ի Գլուհիպոսացն և յեշխանացն, և առհասո-  
րաք յամենայն ժողովրդցն. զլ որ ՚ի մարտ մը-  
տանէ, թէ և ինչն գտան զիր ըստմին թափ-  
տան. բայց հայէցցն առաւել և տեսնաւուն.  
այսպէս և մեք զբա յաղթութիւնը՝ հակառա-  
կանըրտին: Խոյնէս և իշխաննեն գոյին և ա-  
սէին ջարմացմարտ, թէ Մին մարտ՝ զայնըան  
մեծ ժողովս տանի կառավարութիւն ունի.

յապետաց առ կամողիկոսն և առ Լեռն  
գրած բորբերն, և լուսաւորելու համար  
քանի մի տարակուսակը միտքը և կար-  
ժիքը, գրեց բուղբք առ Ալիկան ճգնա-  
ւոր, առ Յակով Ասորի, և շատ անգամ  
յիշուած բուղբք առ Լեռն արքայ՝ Հաղ-  
բատեցւոց ցնորական խօսից դէմ, զոր  
և կրնանք կիկերոնական ջամագոլու-  
թիւն մի համարել իւր անձին : — Ա-  
ւելյաննենք դարձեալ Սուրբ գրոց և սո-  
ցա մերձաւոր մասցեալ մասանց թարգ-  
մանութիւնք, ինչպէս նաև Յովհաննու  
Յայտնուրիհներ և նորա մեկնութիւնը  
կրետացւոց Անդրէաս եպիփառուսէն .  
Բառնաբաս առաքելցն բուղբք՝ զոր կը  
ցուցընէ իւր ինքնազիր յիշատակարտանը  
յունական բնագրին<sup>2</sup> օրինակի մը ստո-  
րին լուսանցից մէջ. բայց թարգմանու-  
թիւնը գեռ մերեցաւ տեղ մը : — Քա-  
ղաքական և աշխարհական դասուց հա-  
մար Յունաց կայսերաց Լէսնի և կոս-  
տանգեանց և այլոց<sup>3</sup> Օրինագրոց և Քա-  
ղաքական և Զինոնորական օրինաց  
թարգմանութիւնքը, յորս և կը կրմէր  
Հայոց<sup>4</sup> զինուորները. և 'ի լատին լե-  
զուէ կարգ օրինաուրեան բազարուաց և  
կայսեր, և Մարդակազմւորեան գիրք  
մը, թերեւս Նիւսացւոյն գրոց մեկնու-  
թիւնն. գեռ ուրիշ զրուածներ ալ, ո-  
րոնցմէ՝ ով գիտէ՝ գեռ որչափ մեղ ան-  
ձանօթք են :

Ոչ ինչ պակաս իւր դրաւոր երկա-  
սիրովթեանց , մանաւանդ թէ աւելի  
ևս՝ ըստ վկայութեան իւր կենսադրաց ,  
առանց տարակուսանաց պէտք է ըն-  
դունինք ի գործ զրած ջանքը եկեղե-


3 Զ Ջեւագիրն Վատիկանու մեջ գրասանի մէջ  
կը պահուի. յօնական գրոց մէջ 859 թիւ, որոյ  
մէջ Ներքանէն գրուած այս խօսքերը՝ հաւան-  
ուքն 'ի կ. Պօլիս (1197) գնացած ատենն էր՝  
ուրաք վերը յէլցիցք: Տես էջ 97:

3 « Այսո ծայրապար Օրինադրութիւնքո  
(գրէ Ներքան), տառապեալ եպիփառոս Տար-  
սոնի, թարգմանեցի ՚ի ծերացեալ հեղինացի  
ատենն, 'ի թէ. Ալօն (1196), 'ի սորացէն ա-  
մուսնի յուրաքանչ:

4 Վասն զի ինքնին Օրինաց լմնալէն յետոց կը գրէ . « Ներսէս տառապէտալ Ձարպմանին և Օքնաբէրէ զինուորական սահմանադրութէնան՝ դուռապահութանէն առվաւ զօրը » :

ցեաց բարեկարգութեան համար , ոչ  
միայն բարոյականի՝ այլ և արտաքին շի-  
նութեան և պայծառութեան նկատ-  
մամբ . միանդամայն տնօրինական և

խորհրդական պատկերաց նկարագրու-  
թինը և սպասուց պակասութեան լըր-  
ման համար ըրածը , որը այլ և ոյլ պատ-  
ճառաւ խափանուեր էին . Եւ այս երկու



գործոց՝ գրաւորականին և եկեղեցական  
զարդուց համար , մեկու թողլով ու-  
րիշ ծախքերը , իւրաքանչիւրին համար  
30,000 ոսկի գահեկանաց երրորդ մա-  
սը սպառեց , զոր Օշխնիւր հայրն տուեր

էր տռաջին տարիները՝ սրբոց տաճարաց  
սպասները տճեցընելու և միանդամայն  
գրքերը բազմացընելու համար , կամ  
գնելով և կամ ընդօրինակել տալով՝  
եւ ինքը ոչ միայն սպասները , այլ և ե-  
մէջ . Արայիշեալներէն զամ՝ Ա . Յովհ . Ուռի-  
Պետք .

1 Ներսեսի համար ընդօրինակեալ գրքերուն  
Պատկ.

մէջ . Արայիշեալներէն զամ՝ Ա . Յովհ . Ուռի-  
Պետք .

կեղեցեաց թիւն ալ աճեցուց, եթէ ար-  
ժանի համարինք կիրակոսի՝ հեռաւոր  
պատմըշին խօսքերն ընդունել, որ թեր-  
և այն տեղեաց այցելութեան ելած էր,  
և կ'ըսէ թէ և Շինեաց եկեղեցիս հրա-  
շազան 'ի վանքն որ կոչի Սկեռա, հուա-  
գու գումարին երրորդ մասը՝ 10,000 ոսկի՝  
աւելիս սիրելիք իրաց համար գործածեց ա-  
ռատապէս, աղբատաց համար, իրբն իւր  
և Յիսուսի աւելի հարազատք. և այսշա-  
փով գոհ շինելով՝ կը բաշխէր ինչ որ  
ձեռքն անցնէր, և սովորութիւն ըրաւ ա-  
մէն չորեկշարթի և ուրբաթ օրեր Տար-  
անին կեկղեցւոյն դրան առջև 200 և 300  
և երբեմն 400 աղքատաց հաց և բակ-  
լոյ բաժնել, ինչպէս առ Լեւոն զրած  
թղթին մէջ և ուրիշներն ալ կը վկայեն:

Եւ հիմա ասոնք ըսելէ վերջը՝ վայելէ  
որ գառնանք և իւր հոգւոյն աւելի խորը  
միրոյ կրակարանին կեղբոնը, 'ի ներքս  
մտնենք, որ ամէն գործոցը, խօսից,  
գրոց մէջ և երեաին վրայ զարմանալի  
կերպով կը փայլէր: Կ'ամաշեմ՝ իրեն  
տեղեկութիւն մի տալու համար այդ  
որբազան ասպարիզին մէջ մտնել, մա-  
նաւանդ թէ ես անկարելի կը համա-  
րիմ որ այնքան քաջութեամբ ճգնող  
անձն մի և մարմնոյ և աշխարհի ամէն

պէտքերը ոյնչացընող մը, օր ըստ օրէ՝ 'ի  
պատկեր Աստուծոյ աւելի չփոխակեր-  
պի, չնոգիանայ և չհրեշտականայ, Ո-  
րոց ապացոյց ունինք ( եթէ մինչև հի-  
մա ըստածնիս բաւական չէ ) բազմաթիւ  
վկայութիւնք կենսագրաց<sup>1</sup>, զորս չդը-  
րինք հոս, օտարազգեաց մեծարանքը՝  
որ թերեւս իւր համազգեացմէ աւելի էր,  
և Տարսոնցի երկրորդ Պօղոս մը կը հա-  
մարէին տեսնել՝ 'ի քաղաքակիցն 'ի ներ-  
սէս. Լեւոն թագաւորին խորագէտ վկա-  
յութիւնն՝ որ կաթողիկոսական աթոռ-  
ուոյն արժանի կը դատէր. և վերջապէս  
իւր ակամայ խոստովանութիւնն ալ,  
վկայութոցը և համբաւոյն ու համարմա-  
նը վերայ՝ առ թագաւորն զրած ջատա-  
գովական թղթին մէջ, երբ բռնագա-  
տուեցաւ լուծանել զլուութիւն և զնե-  
րողութիւն և զաղօթն՝ զոր պակասամիտ  
ունայնախօսուց քանի մի Հաղբատացւոց  
և Անեցւոց նկատմամբ կը պահէր, և  
որք 'ի հեռուստ մինչև առ թագաւորն  
իրենց բամբասանքն և քսութիւնն հաս-  
ցնենք՝ կը հալածէին զինքը, և ինքն  
ստիպուեցաւ զթագաւորը ճշմարտա-  
պէս տեղեակ ընելու համար՝ ոչ միայն  
իրենց տղիտութիւնը, այլ և գինեմոլ  
վարքը<sup>2</sup> վար զարնել: Բայց աւելի ևս  
վկայ են մեզ իւր սէրն և զմայլմունքն

բերանի 34 հառից հաւաքում ըշ կոյ. որ հի-  
մա Եմթածին կը պահուի. ( թիւ 887 ) :

1 Իւր վարուց համառաւ ( թերթաշափ )  
գրին, որ ականատեսներէն և կամ մերձա-  
սորեւէն մին կը կարծուի: և որոյ խօսքերը  
տեղ աեղ կը կրնեն, եկնատգիր անուանելով,  
պատիւ կը գրէ.

2 Ներողդեան և յիշուատի սուրբ և երից  
երանեալ արեգերալցոյ հօրն մերց՝ սրբոյն ներ-  
սիսի, ամենիմատ վարդապետի և արքինեպիս-  
կապուսին Տարսոնի ». և այս Յայսմաւուըքի մը  
մէջ գոնուեցաւ, իսկ սովորական Յայսմաւու-  
ցա մէջ համառաւ քանի մի խօսք կը կարուց  
վերայ, ուրիշ սրբոց յիշատակին համաձայն.  
բայց չափաւորպէտ բարուց համար զայս  
կ'ամբիուն, թէ, « եր ինքն խօսարէ և հնգ, անպահոյն, ոզորմած,  
անտառաւելզ : » — Գր. Տաթէնցիք, ո-  
րոյ տեսութիւններն շատ իրաց մէջ 'ի Սորոյն  
կը տարբերէն, զատ ալ նման Պարէնին կը կը-  
էլ « Մեծէ Նիրասէն 'ի Մէտութեան Սաղմո-  
սին », ուսկէց վեյցութիւն մը կ'առնու իւր  
Մէկութեան Մասմէի Քաղուածոյն համար:

3 Թերեւս ունաց ծանր երևան Լամբրունե-  
ցայն այս խօսքերն և երգիծանքն ընդգէմ Ծու-  
ակերպւյն և Բարսով Անոյ Եպիսկոպոսին և  
նմանեացը. բայց յիշեն մեր Սորոյն նախատիւ-  
ներն և կենացու Յիսուսի բաղցրութեամբ խօս-  
ւաւ, բայց ոչ կեղծաւորու և նախանձու երե-  
ւութով պարզամտները խարոցներուն, գառ-  
նազիստ գայլերուն, և ահագին վայերով զե-  
րենք գողացուց ամենուն առջեւ. և ինքը՝ որ  
յիմնար և առայս ըսելը գեցնական սպառնա-  
լէք կ'ամբիւլէր, մորապէ և հոյրը կոչեց զերէնք  
( նոյն իշխանութեամ ): Արդէն ռասականէն  
աւելի ծանօթէ ե մեղի, և գեռ ևս պիտի ծանօ-  
թանայ ներօխիս սրբութիւնը և հեղութիւ-  
նը. բայց ոչ ըստ բաւականին հականակուցա-  
լութիւնը, « յորոց միոյն ( Տուուկութիւնը )  
նորա յանձուուն ձեռներիցութեան և պնդագու-  
խութեան, աստիճանը, համնաբար յայսներ  
էր մասմաք Գրիգոր Տղայ կաթողիկոս, առ  
Հաղպատացիս գրած թզմոյն մէջ. և յիշոյ Կի-  
րակոս Պատմին աւելի յայտնի եղանակաւ, ուս-  
տի և փարուսամբ միայն կրցաւ Զաքարիա

առ մաքրակի նեցաղ և սիրաբորբոք անձինը, ինչպէս առաւետարանին Յովհաննէս և առ Գրիգոր Նարեկացի, սիրելով իրեւ Նմանք զնմանիս, ոչ գործոց մէջ միայն, այլ որոճալով և լուսաբանելով իրենց ըսածները: Խոկ ես առաւել իւր հոգեբուղիս խօսերը և իղձերը, որք և երգեմն երբեմն գրչէն ցայտած անդիմակաց և անհամբեր կայլակներ ( կաթիւներ ) են, և ահա սուրբ մը միայն և մեծ առլըր մը՝ կրնար համարձակ ըսել և գրել: « Առ քեզ ծարաւիմ ( ուշ Բիսուս ), քեզ փափազեմ, քեզ տոփամ ». ծարաւիմ ըմպել ՚ի կրկին վտակաց կողիդ, որով և արրեալ՝ սիրով քով զմայիմ: Տոփամ ակնարկել զդէմսդ . . . նուազեցաւ հոգի իմ ՚ի քո անճառդ սիրոյ . . . թակացաց՝ յորժամ առ քեզ ակնարկեմ . . . Երբ եկից երեւեցայց քեզ »: սոյնպէս ուրիշ նման աստուածախօսութիւնը : Գր. Սկսաւացին լսելով շատ անգամ հառաջանքը կրկնելը կը գրէր: « Յար աղաղակէր ընդ որս հետակիւրն, Երբ եկից երեւեցայց քեզ », և այլն : — Ով Հիանալի համարձակութեան, մանաւանդթէ սրովքէանման սիրոյն ասսոկոթեան, որ ըստ Առաքելյն ըսածին՝ կատարեալ սէրն՝ մերժէ զերկիւղ. և դատաւորի տեղ միայն փրկիւը և փեսայն կը ցուցընէ և կը փափաքի անձկանօք և կը սպասէ կոչմանն իրեն առջնը Ներկայանալու դէմ յանդիման : Եւ ի՞նչ պիտի գործէ՝ երբ փեսայն ուշանայ հարսնացեալ հոգւոյն անձկութիւնը և գորովալիր սէրը անձեցընելու համար : Կը հառաջէ, կը պաղտախ ողըրմուկ ձայնիւ և կ'արտասուէ. կ'արտասուէ ստէպ, միշտ արտասուք կը թափէ : Լուսածին մարգարիտ՝ որոց դին չկայ . գերազայն պարզէ՝ վէհագոյն աստուածասիրաց շընորհուած, պորա, խարի՛ ՛ըմբռներ, բայց

Սպասալարին պատճեն ազատիկ: Խսկ «Ան-  
ցոյն պառըն՝ յայտիկ է», կ'ըսէր Լամբրու-  
նեցին. և կ'երևի թէ Թուրքաց նման ունե-  
ցած ռափի բարչեն զա՞ր կաթօղիկոսութեան  
աթոռույն ալ և ետևէ էր, ինչպէս երեխմ նշյն Ա-  
նոյ քաղաքուն թէր համանուն եափիկոսուն:  
Տր չափ ամենալի են Լամբրունացոյն դէմ ըսած  
խօսքելնին և գործերնին, այնավի այ աւելի

Հողետեսից համար այս շնորհըն (արտասուաց) այնչափ ազդու երեցաւ՝ որ նըմանութեամբ՝ մտաքացորդիւն կուցեցնու չոգին՝ ի ընէ հուրէ, ինչպէս մարմինն ալ՝ ի ընէ ցուրտ և օտան. երբ հոդույն սէր կը վասար, կը ըորդոքի, պէտք է որ իւր լծակիցը կակղացընէ, սառը հալի և ըղձից ջերմաջերմ աղբերքն բդիմին : Այսպէս էին ահա Սիրելի Ներսեսի աշաց մշտակոս վտակներն, զոր թերեւս իւր սիրելագոյն անձն խաչատուր՝ սպասառն և աշակերտն, հեղեղ արցուրնք, կը կոչէ, և անտանելի հեծ, անցամաքիլի աղրիցր : « Եւ ո՞՛ որ յաղիկրաբար արտասուացն հոսութիւն յառէր՝ և ոչ վաղվաղակի զառ՝ ի նմանէ զանկապտելի բարեացն պտուղ կթէր . ո՞՛ որ զըզգակի նշանակացն կերպ տեսաներ՝ և ոչ իսկցն յիմանտլեացն տեսիլ փոխարկէր . զի պատկառանք և շուք երեսացն՝ զաստուածութեանն առաջի կալ յայտնէր . և հեղաբար արտասուացն իջումն՝ զիկնարարին չարչարանն եւ զիսաշի իմաստութիւն՝ հայեցողացն վարդապետէր՝ տէր ։ Եւ որչափ սէրն՝ ի վեր կը խոյանար, այնքան արտասուաց անձրին յորդութեամբ կ'իշնէր . մինչև կ'ըսեն ոմանք՝ թէ և սովորութիւն էր կտաինչ՝ ի վերայ կը ծիցյն կապել՝ ի ժամաստուածային պատարագին, զի երկիցս և երիցս անդամ սարիկաւագն քամել ։ Եւ ո՞վ հրաշալի սպունգ սիրոյ: — Ինքն իսկ՝ որ միշտ կ'արտասուէր և սիրով էր լցուած, կը վկայէ առ լևոն գրած թջղթին մէջ ներկի անգամ, թէ Աստուածոյ առջն կը կենար և միշտ արտասուաց հոսմամբ ։ և թէ և և և լուսաւորեալ՝ ի վսյեցութիւնն՝ հեղում զարտասու առաջի կստուծոյ Հօր ։ Ա՛րշափ անձկալի և զմայլեցուցիլ պէտք էր լինել այն ատեն սրտին արտաքին հայրաքանի կամաք կ'առաջ կ'առեցնեն, մանաւագ թէ կը

իւր փառքն կ'աւելցնեն, մանաւանդ թէ կը  
լուսցընեն. վասն զի առանց հաղածնանց և վը-  
տաց՝ կարծես մեծ պակաս մը կոյ սրբոց և  
քրիստոնասէր անձանց կենաց մէջ:

յելին՝ գէմքը ըսել կ'ուղեմ, և որչափ «քազզրահայեացն տիպ՝ զսիրոյն հշմար, տի հպաւորութիւնն յայտ առնէր» ։

Բայց պէտք՝ որչափ հանգուցիլ է հոգւոյ՝ այնչափ ալ առաքինւոյն շարչարող է. և այս անձս՝ որի հոգին՝ այսափ եռանդ և բարբուռմն ունէր՝ կարելի չէր որ հողեղէն պահարանն երկոյն ատեն կրէր զայն. այսպէս լինելով Ներսէս Սիրելի՝ անկարելի էր յանկալի կենացը երկարութեան վերոյ յոյս ունենալ. և թէ պէտք ինքն՝ այսպան բարելաւութիւններով, Սկեռացւոյն վսեմական խօսքին համեմատ, օրէ օր և բյիւէր իրբն զաղբիւր, յառաջէր օրպէս զդես, ծաւալէր իրբն զծով ։, բայց պէտք էր քիչ աւտենէն՝ ի վախճան հասնիլ, և բովսն գակ էութեամբ տատուածութեան անպարագիր ովկիսնին մէջ խառնուիլ, յորում՝ այնչափ տարի կը հսուցընէր սրտին այսպիսի իջձերը՝ իրբն յառաջնթաց վսակներ։

Այսպիսի վեհ կեանք մ'անցընողին՝ վայել էր և վեհ վախճան մ'աւնենալ. որոյ առաջուց տեղեակ էր, ինչպէս կը վկայեն,՝ ի վերին յայտնութենէ. ըստ ոմանց՝ յառաջ, և ըստ այլոց՝ յետ այն համառօս ցաւոյն՝ որ սպասաւորաբար կենացը կապանքը քակեց: Եւ ինչպէս շատ մասամբ՝ սրտին եռանդեամբ, հոգւոյն աշխուժով, խօսքի և զրոյ առատաթեամբ և զօրութեամբ, սրբազն գրոց մեկնարանութեամբ, նախատչաց և բամբասողաց մեծողի երկոյնմտութեամբ և ներողութեամբ՝ նմանող եղաւ Յովհաննաւ թակերերանի, գրեթէ նոյնպէս կատարեց՝ քան թէ կրեց մոհուան օրէնքը. «Լոյցը, կ'ըսէ կենապիրն, անբերելի ինդութեամբ. և զգեսատառեալ խօրհգական զգեստիւ՝ մատուցանէր զիրկագործ պատարագն, և հալպրեալ՝ ի կենարար և ի մեջսպաւիչ խորհըրդոյն՝ յորմէ ոչ երբեկ՝ ի բաց եկաց. յետ այսորիկ յառաջ կոչէր զեղբարսն, և զելիցն խօսէր զբանաց. ակաւուք երկորպէր զիրատականսն՝ սիրելի սրդւոյն.

«Նոյն Գրիգոր Սկեռացի:

աւանդէր անփսխադրելի մնալ ՚ի հոյն: Եւ (մինչդեռ) որք մերձաւորքն էին՝ իրեւ լուան զհրաժարական բանսն, ողք առեալ կոծէին զանձինս մորմիքելի սգով զբաժանիլն ՚ի նմանէ, ինքն ՚ի վեր զակն կարկառեալ յորմէ ոչ երբեկ խունարհեցոց . . . զուարճ զիմօք և արտօսսութեալից ինդութեամբ ասէ, ի ձեռուք աւանդիմ զհոգի իմ: Եւ իսկզին վըշեաց զմաքբական հոգին ՚ի ձեռու Աստուծոյ՝ որում՝ անձկացեալն էր ։ . . . Եւ արդեօք մըրբարձրացընելով հասուցին զայն՝ հոգւոյն յարակիրթ հրեշտակներըն: — Արդեօք համարձակիմմեր հոգերգողին հնատ, որ զմսկիբերան շարականին մէջ ներողեց, եւր վարուցնմանորինակը ՚ի հանգստեան ալ զասակից ընել, և Յանձառելին մերձեալ ՚ի լըս՝ հուպ երրորդութեանն ։ այն՝ որ իւրմերձառը կենսազրին համեմտու և հանապազ զբիկստոս ունէր նոպատակ և նախազաղափար ։ և զոր միւս կենակցին համեմտա՛ ու Քաջարութեանու կազմիչն ամենից՝ հայելի եղղնա ՚ի միջի ։ . . Վայելուց չէ միթէ հոս միւս ձեռնատուն գրչին և համանուն քեռորդուն հետ զուշլ իրաւապիս. և Ռ' Հոգւոյն զօրութեան, որ չնչէ ուր կամի, առանց չափոյ իւրօյն զիրսոն տալով ։ . . Այս աշակերան ներսէս քահանայ, գեռուոյն անուան և ոգւոյն արժանապէս կրողը, ու շակիրատեցաւ նորա տեղ՝ Գրիգորի Սկեռացւոյն, որ գրեց Սլրոյն ներբողեանը՝ սորտ աղաչելով. և երկուքն ալ միաբան կը վկայէին՝ թէ զգաստք ամենիին չգանգակեցան տօնել «զփառաւոր օր յիշատակի վերափոխման ։ նորա, որ էր յաւկիսի 14ին, 1498 տարւոյն և զինքը միայն կը նշանեն համակարգաց՝ մէջէն թագավարազանց մահուան հետ արքունական Յայսմաւորեներն. և Յայսմաւոր հանգեաւ ՚ի Գրիստոս՝ Տէր ներսէս կամբրունցին, սորք հայրեն, արքեպիսկոպոսն ։ և վամինի չափանից բարեպաշտ հանգուցելոց մէջէն՝ իրեն միայն Սուրբ մակղիբը կ'ընծայեն: — Այնքան մնանախանձ և երկիւղած ականատեսանձանց և ականչալուր վկայից՝ միակ և

մեծ միհթարոթին և ուրախութիւն կը լինէր իւր սրբութեան յիշտատակն և տօնը, որոյ վերայ կենացն իսկ ժամանակի՝ ուրիշ նշաններէ զատ, երեցեր էր և զօրութեանց հրաշը . . . այսոցն հաշալծումն ե ախտից բուժումն , ըստ վկայութեան ժամանակակից կենասպրին և Սկեռացւոյն . և այս բանիս վրոյ պէտք է մենք ալ միշտ ուրախանանք և փառաւորենք իրեն փառաւորիշներավը՝ զամենափառ Աստուածութիւնը :

Բայց հարկ է որ ներկայից ուրախութիւնն այնպէս անխառն չինէր, այնպիսի հեղինակէ և հայրապետէ բաժնուած և որբացած մնալուն պատճառաւ :

Եւ ով կը կրնայ տարակուսիլ իւր մերձաւորաց, ազգակցաց և աշակերտաց ողորմազին սդոյն վրայ, և թերեւ Շահանգուստ մօրնիւր ծնողին, որոյ կենդանութեանը կը վկայեն որդուոյն մահուընէն ութ տարի առաջ, բայց պատմութիւնն ալ կը լուէ. բայց մեղի ցաւալի կամ զարմանալին այն է որ իւր գովարաններն անդամ խիստ համառօտիւ կ'աւանդեն, մանաւանդ թէ կը լսեն թաղման և յետին հանգստեան յիշտառկը և եղանակը. միայն Սկեռացին այսչափ կը զրէ. « Զօրինաւոր ( զայն ) գործ վճարէին, ասղնասիւր և քահանայական օրհնութեամբ 'ի հանդիսաւ յուղարկէին . զերորդութեանն անձկանքը մաքրութեամբ տաճարացեալն 'ի տաճարին ջեառն մեծափառ պատուով 'ի զամբարանի դնէին, զԱռորդն 'ի սրբարան Սրբոց հանգուցանէին, և զյիշառակն ամ յամէ յեօթներորդում ամենանն ( յուլիս ) ըստ հռոմէականին 'ի Ճ՛ օրն աւանդէին » : Սրբոյն քեռորդին կը ցուցինք մեզ թէ սյն հանգուտեան տաճարն Սկեռապայինն էր. բայց թերմս սրբարաննեալ մարմնոյն մաս մ'ալ Տարսոնի տաճարին չնորհուեցաւ. վասն զի այսպէս կ'ընէին երկու տեղ բնակած երեխնի և սիրելի անձանց, ինչպէս ըրին նաև

լեն թաղաւորին : — թէ նվարդեօք առաջին անգամ՝ հանգստեամբ կամ յիշտառին օրը դամբանական ներողն ըրաւ չիմ զիտեր . բայց անշուշտ նոյն սգոյն օրերը խաչատուրի իւր սպասաւորն և աշակերտն՝ չափակցեալ տաղով երգեց այս Ոլլը, ռամիկ լեզուաւ, բայց խիստ զգացուած և սրտաշարժ, մանաւանդ սկզբնաւոր բացանակի և վերջորան ստղովն , որ մեր դպրութեան մէջ տոյն տեսակի միակ և աննման բանահիսութիւն մ'է . և չեմ տարակուսիր որ ախորժով և հաճութեամբ զայն կարգոյ, միանդամայն կարեկցելով այն մորմոցեցուցի խօսքերուն վրայ, ամէն անձն՝ որ ցանկացող է Սիրելեցն ներսեսի և ամբողունեցույց . և միթէ կարելի է եթէ մէկը սիրս և միտք ունենայ :

Ամ զամ թողում, զամօթ մոռանամ, ջեմլուսեցն նէրըն մեծարեմ. Զիմ որնիդեամ պարտըն վը ձորիեմ, Անձէմ զուշովս ու դառնամ 'ի միաւ Երը մարտկ նէրըն յէլէցի. Լոյսը գնիաց, ու ժը պակասեաց, Խեցս ու Հոգիս իմ գումարեցաւ: Յիշէմ զիմ աէրն 'ի Նելքրունի . Յիշէմ զիմ աէրն 'ի Նարեկացին. Յիշէմ զիմ աէրն առջն կանթեցին. Յիշէմ զիմ աէրն 'ի յեկեցիցի. Յիշէմ զիմ աէրն 'ի տունն ի քեսամին. Յիշէմ զիմ աէրն 'ի բազմահաշին<sup>2</sup>, Յիշէմ զիմ աէրն առնեանին. Յիշէմ զիմ աէրն 'ի պատարագին: Այս ձեզ հօսիմ, ձին կըտարարանք, Ենէք որ լսնէք, զի անպիտացայ(ք): Ենէ Անունմալը, զի անպիտացար, Ենէ Դասինէլ, որ Խոսպանեցար, Ենէ Արարածք, Հաց, որ Փակէցար, Ենէ Կատէիծ, որ անպարահացար: Անունմալը վայիս Հայուսից Հայուսանէնէ Որդին Ռոռաման: Ենէ Ժողովէ Ջեսին որ պահէ, Զի այլ շրկայ աէրըն որ մէկէ: Բայց լսո վայ ուուը ինձ գերելոյս, Զի քը նըման՝ աէր եմ կորուսել: Դարան տեսար գու զէրն 'ի իսակն, Ես գառն աեւոյ զիմ աէրն 'ի տամաթին<sup>3</sup>. Դարան լըւար գու ըզնարասան, Ես գառն լոււայ ես զըն ողմէկին: Լացոցք Թղթոց կաթողիկէեց, Ենէք ու լիք վայիս ձայնակից, Չունինք այլ աէր՝ որ հակցընէ<sup>4</sup>,

3 Գուցէ ըլայ բազմացն՝ որոյ վրայ վախճանակ է Ա. Ներսէ:

4 Կ'էկու համարցընէ. Աթէ ոչ է հազցընէ՝ իրք զարդարել:

Ու ոչ այլ գրով՝ որ նորոգէ։  
Ե՞կ Ասպէ ալթ Տարունեցի։  
Ու առ ամփոփէ զքանիս որ լսեցի։  
Ե՞կ Ամժանաս, լոյցս ձայնակից։  
Բաներըս քո են Պատարագի։  
Բայց իմ հսկող տէրըն չերևի։  
Ու մինըւի ու ոչ բացայատի։  
Ու այլ պայծառ Քարունի ասեսի։  
Ու այլ նըման քեզ տէր գրասնի։  
Ու ՚ի քո բանիք այլ ոք առջարի։  
Ու այլ հսկող թեք քո տարածի։  
Ու այն անքուն ակը բորդի։  
Ու այլ հեղեղ արցունիք իթանի։  
Անսանելի չեծն՝ այլ չըլլսուի։  
Ձայնեմ վանիցն որ հսկին չունի։  
Կարօտ եղի արթուն հովեւի։  
Ու Աստուած, ու զայս բանս այլ դըրեցի։  
Որ ով մնի զերթ զնիք չըլինի։  
Իմ տէրն արթուն ՚ի յամեն տեղի։  
Կիրթ էր ու վարժ ամեն իմաստի։  
Կենացն սուրը էր ու ոչ քուպիտի։  
Վարուքն ամրիծ՝ նըման Մովսէսի։  
Սրտին ողորմ՝ նըման Պատղոսի։  
Աղքատասէր՝ նըման Յիսուսի։  
Ներսէ՛ պըսակ էր յեկեղեցի։  
Զարթուցանէր զամենն ՚ի բարի։  
Ներսէ՛ ոչ առ ծուլիցն ՚ի տեղի։  
Տեղ է հանդարտ արթունցն ՚ի բարի։  
Ներսէ արթուն էր դեմ դիշրի։  
Հանիք՝ ՚ի գլուխ ըցայդն ՚ի կարգի։  
Տես սահմանէր ըզկարդն ՚ի տեղի։  
Տես խոկարդվ գըրէր գըռուի։  
Նըր առաւօտ մնէր ցորենէի։  
Ակիզըն գնէր նու պատարագի։  
Ներսէ՛ ցասունն էր ընդդէմ ախտից։

Զար Խորհըրդոց չունէր նա տեղի։  
Բայց զուարթուն էր ՚ի պատարագի։  
Նեշոն ե կամակ եղարացն ամենի։  
Ներսէ՛ աղքեր անցամաքելի։  
Ունէր ՚ի գոււին ՚ի յիւր գոււիլի։  
Նետ տորորէր յազագս ամենի։  
Նետ արտասունէր ՚ի պատարագի։  
Ներսէ՛ վստահ էր ՚ի սէրն Յիսուսի։  
Մեղասրաց տայր զեկնդեցի։  
Յիշէր ըզբանըն մեծ տէրունի։  
Թէ՛ Յո եկի վանց մեղաւորի։  
Ներսէ՛ այրեաց էր ինամածուն։  
Որբոցն հետ տեղի խօսելու։  
Ունեսրացն օրինակ բարւոյ։  
Չունեսրացն էր առան կենացը։  
Աւաղ մըտացն որ գադարեցաւ։  
Աւաղ գըրլին որ խօսանացաւ։  
Աւաղ բանին որ պակասեցաւ։  
Աւաղ տեսիցն որ թառամեցաւ։  
Աւաղ բառին որ աւազեցաւ։  
Աւաղ գերեւացն որ որր ճնացաք։  
Դու, Տէր, գըտար որում ցանկացար։  
Դու, Տէր, հասար ում գարսացար։  
Դու, Տէր, առէր որ վաստակեցէր։  
Դու, Տէր, աեսար որում ջանացար։  
Դու, Տէր, տուար ում անուանեցար։  
Դու, Տէր, հանգեար զի աշխատեցար։  
Ես ազակեմ զիմ ծերըդ բարի։  
Զեռասրունգ ծառայս քո գերի։  
Որ զայս լոյց բանին գըրեցի։  
Գիտեմ որ մերձ կաս այժմ Յիսուսի։  
Ծունըր կրկնեա վասն իմ ցանկալի։  
Տուր աղաւանս ինձ աղքասալի։  
Դառնալ ՚ի հող ինձ կեանք չըլլիտի » բ

## Խ Դ Ա Ւ Ն Զ

Անբարեկամ, անընտանի,  
Աշխարհիս մէջ իրին պանդուխտ,  
Քաշուիլ ապրիլ յիւրում խըզի,  
Անզըներվ կեանք անօգուտ։  
Սիրու տըկռած՝ անձին սիրով,  
Տունը՝ իրմով միայն լեցուն։  
Դըռնէն երբեմն դուրս նայելով՝  
Եղինիր ածել ընկերներուն։

Անցած տեղին՝ յայտնի նըշան,  
Հեռացեր թողուլ իւր գարցութեան։  
Ամէն ծաղիկ անուշահոտ՝  
Թըքստելով կանակ արօտ։  
իւր տանը մէջ իրը ՚ի բանզի  
Ապրիլ մեռնիլ տըրտմութեամբ լի։  
Այս է պատկեր գար Խըղունին։  
Այսն կենսագիր ինքնամոլին։

